

ՏԵՐ ԵՒ ՏԵՐՈՒԼԻ
Ե. ՓՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ
Տեղիւնը ՍՏՅԱՆՍԻՆ Լրագրի
ԳԱՅԻՐԷ (Եգիպտոս)

Adresse:
E. TOROSSIAN
Direct.- propr. du journal Arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱՊՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ
Տարեկան ողջ դասակարգում 60
Վեցամսեայ » 35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ
Տարեկան Յրանք 20
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱՊՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՒԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնայարարական վրայ է:

Խնայարարական ուղղությամբ գրութիւնք
էս չեն տրուիր:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Կանխիկ վճարելի են:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կը խնդրենք մեր յարգով բաժանորդներէն որ
ծանր իրենց բաժանորդները մեզ հասցնել, զիւրա-
ցանքով համար մեր կանխիկ ծախսերն:

ՆԱՄԱԿ ԱՂԷՔՍԱՆԳՐԱՅԻՆ

Աղէքսանդրիոյ 7 Մեյս 1901

... Խմբագրութիւն

« Արշալոյս » Ազգագրական Լրագրի

ի Գահիրէ

Տէր Խմբագրապետ.

Քաղաքս հրատարակուող « Փիւնիկ »
չարածածկերը իր թիւ 15 և 4 Սեպտեմբեր
1901 թիւին մէջ հրատարակած է Ե. Փոր-
չուճեանի ստորագրութեամբ նախատախից
նամակ մը ընդդէմ Վիճակի Առաջնորդ
Գեր. Յովակիմ Սրբազան Այլապետի, ինչ-
պէս նաև անցեալ կիրակի եկեղեցւոյ շրջ-
ջախի մէջ տեղի ունեցած ոտնկանական
հակոտնածեան առթիւ ամենամահիմն և ար-
տայօղ տեղեկութիւններ:

Սրբազան հօրը պատիւը մեր ամենքին
համար նուիրական ըլլալով, ստորագրեալըս
փութացինք Ն. Սրբազանութեան ներկայիս-
նալ և եղբրութիւնը ուղղակի իր բերնէն ի-
մանալ:

Ն. Սրբազանութիւնը յայտարարեց մեզ
թէ Ն. Փորչուճեանի (1) նամակը ծայրէ ի
ծայր անճշտ է և խեղճութեամբ և թէ ին-
քը, իբրև վիճակի Առաջնորդ իրեն համար
անպատշաճ կը նկատէ լրագրական հրատար-
ակի միջոցով անձամբ մասնակցել վիճաբա-
նութեանը. և սակայն պատրաստ է փոփա-
քուցի ծայրէ ի ծայր պատմել բուն եղե-
րութիւնը, ինչպէս որ մեզի պատմեց:

Սրբազան Առաջնորդը ինչպէս Տիրոջ
Փորչուճեանի նամակին նոյնպէս և ոտն-
կանութեան հակոտնածեան առթիւ, իրեն
վերադարձած գերին համար իր խորունկ ցա-
ւը և բողբոջ յայտնեց մեզ:

Առտի թէ Ն. Փորչուճեանի նամակին
և թէ « Փիւնիկ » ի սոյն հրատարակութեան
առթիւ մեր ցաւը յայտնելով, կը յանձն
նարարենք մեր մեծարգոյ ազգայիններուն
որպէսզի այս կարգի ստայօղ լուրերու կա-
րեւորութիւն չ'ընծայելով բուն իրողութիւն-
ներուն տեղեկանուի համար Սրբազան Ա-
ռաջնորդը հօր Նեղիսկաւոր վկայութեան
գրիւնն որ անշուշտ Տ. Փորչուճեանի վկայ-
ութեան հետ չ'կրնար բաղադատուիլ:

Նաև, աւելցուց Գեր. Սրբազանը, թէ
այս ամենը լաւ կը լուսարանուի, եթէ Տ.
Գալթեան հաճի հրատարակութեան տալ
այն նամակը որ նորին Սրբազանութիւնը Օ-
գոստոս 16 թուականու Գահիրէէն ուղղած
է իրեն:

Ընդունեցէք, Տիրոջ Խմբագրապետ, մեր
չնորհակալութեանց հետ մեկտեղ, մեր յար-
գանաց հաստատիքը:

Յ. Յ. ԱՂԱՔԱՆԻՆ. ԳԵՈՐԳ ԻՓԷՔԵԱՆ
ԱՐԻՍՏԱԿԵՍ ՂԱԶԱՐԵԱՆ
ՀԱՅԻ ՆՇԱՆ ԺԷՊԵԱՆ Կ. Յ. ԱՂԱՔԱՆԻՆ

(1) Մ. Ն. Արեօք սա այն և Փորչուճե-
անին է որ Մանթաշօֆի Աղէքսանդրիոյ Գործա-
կալութեան քով կը ծառայէ, եւ որ մը ստեղծ թէ

ՄԱՏԻՈՅ

ԱՏԵԱՆ

— 406 —

Տիրոջ Առաջնորդին Աղէքսանդրիոյ
Հնչակեան Մամանճիւղին գիմելով պատ-
ւոյ ատեան պահանջած է Մարտ Բիւրատին
դէմ, այն ամբաստանութեանց համար զոր
այս վերջինը ընել յանդգնած էր յիշեալի
յեղափոխական կեանքին նկատմամբ:

Ահաւասիկ պատճէնն այն նամակին, ու-
րով Տիրոջ Առաջնորդին պատուոյ ատեան պա-
հանջած է Հնչակեան Մամանճիւղին:

Աղէքսանդրիա 8 սեպտ. 1901

Մեծարգոյ Տիրոջ Առաջնորդին

Ընդհ. Ժողովոյ Հնչ. Մամանճիւղին

Աղէքսանդրիոյ

Մարտ Բիւրատ կողմէն սրիկան « Փիւ-
նիկ » ի 11 Սեպտեմբերի (թուականի սխալ կայ,
զի շարքի 7 սեպտեմբերին հրատարակուած է
թիւրք) եւ 16 թիւին մէջ « Անթաղ Դիակի մը
վրայ » խմբագրականով մը յեղափոխական
կեանքս չարաչար նախատած է հետեւեալ խոս-
քերով:

« Բայց երբ անուտըրը մանկացաւ ի
« Թուրքիա, երբ գաւառներէն դադրեցան տեղա-
« ղէ շահու աղբիւր ապրանքները, երբ ազնա
« փոխանակութիւնը վստահեցանք տիրել ան-
« իշխանութեան երեսէն, այն ատեն գրագրերը
« դարձաւ յեղափոխական, մտաւ ազգային Ս.
« Գործին մէջ երբեք արեւստաւոր յեղափոխու-
« թեան, ապրեցաւ հոս ստորինը, մինչեւ վեր-
« ջերս ալ կ'ապրէր ու դեռ շատ պիտի ապրէր,
« կ'ըսեն, եթէ... անգուժ իրողութիւնները չը
« գային յանկարծ յեղաշրջուի կայսրութիւնը եւ
« դիմակալներ ընելու այդ արհեստով յեղափո-
« խականը, որ ճշմարիտ պատուաւ մը եղաւ Ս.
« Գործին, ու ինչպէս որ հիմա փորձանք մը և
« դաժ է ազգին զլուտն:»

« Հատորներ կարելի էր լեցնել այս Անթաղ
« Դիակին զոտոտ կեանքին մանրամասնութիւն-
« անորով բայց ատի ժամանակի գործ է... »

Կը խնդրեմ որ, Տիրոջ Առաջնորդին, նա-
մակն ստացածնուր պէս, հաճիք Մաման-
ճիւղին Ընդ. Ժողովը ի նիստ գլուխը և
Պատուոյ Ատեան մը կազմել քննելու համար
Մարտ Բիւրատ անուն սրիկային իմ մասին
ըրած վերոյիշեալ անխառնութիւնները և
իր անաչառ վճիռը արձակելու զոր Մարտ
պարտաւոր ըլլայ իր թերթին մէջ իսկ հը-
րատարակելու:

Ես իմ կողմէս Ատեանին դատուոր կը
կարգեմ Տիրոջ Տօքթ. Էնֆիլէճեան, Միհ-
րան Տամատեան, Գալթեան (Գալթեանցա-
կան) ու Սիսակ Պոզոսեան: Եթէ այս վերջ-
նոյն անկողնակալութեան վրայ կրնաք
կասկածիլ ինծի ազգական ըլլալուն համար,
կարող էք ուրիշ մը նշանակել. ես իր ա-
նունը դրի, վստահի Պօլտոյ գործերուն մօ-
տէն տեղեկ է:

Պատրաստ եմ ինքզինքս լիովին Պատ-

Տիրոջ Մամանճիւղին հասցէին զրկուած երկու օ-
րինակ Սահմանադրութեան տետրերը ընթացիկ
եղած է, մինչդեռ ո՛չ զրկուել եւ ո՛չ ալ « Հրատա-
րակչական ընկերութեան » Պատ. Վարչութիւնը
այդ հասցէով ընթացիկ մը ընդունած են քարտէս,
եթէ « Սահմանադրութեան Պաշտպան » ներքին մին
ալ այդ ստղ պարտն է, ուրեմն կարելի է գիւ-
րակ քննել թէ « սահմանադրութեան պատ-
պանները » ինչ տարրերէ բաղկացած են եւ ուր
կրնայ յանգիլ սուտերով սխալած գործ մը:

այ Ատեանին տրամադրութեան տակ դնել
և իրեն հայրենային տեղեկութեանց համար
ամենէն վաւերական և ամենէն պատկառա-
լի աղբիւրները: Պատուոյ Ատեանին վճիռը
ինծի աննպաստ ըլլայ կամ նպաստաւոր,
ինծի համար կ'ընդունիմ իբրեւ վերջնական:
Ընդունեցէք ընկերական սիրով իր բա-
րեւերս:

Լեւոն ՄԻՐՏԻՉԵԱՆ

ԳԱՅԻՐԷԻ ԴՊՐՈՑԻՆ ՇՈՒՐՁԸ

— 407 —

Մոյլ տղայքներուն աչքերը լ'սոյս...
Գալտեան վարժարանին դռները՝ որ ամ-
սոյս 1—4 պիտի բացուէին, դեռ մինչեւ
15ը ամուր կերպով փակ մնալու սկիսեալ
հրամանը ընդունեցին Հոգաբարձութեան
կողմէն:

Ժողովուրդը՝ ակնհայտ չորս բայց՝
անցած դարձածին իրազեկ ըլլալ կը փա-
փաքի, և սակայն, ցաւալի է, որ շատ ան-
գամ բոլոր լսածներուն կը հաւատայ,
առանց լուրը քննութեան մը բռնել անցնե-
լու զանազան, և յետոյ մութ անկիւններուն
մէջ թաքցող վարձկաններուն տուած թիւր
մեկնութիւններէն ալ պարզամտօրէն խա-
ռուխով կ'սկսի խճճել, քաշքշել և նոյն-
իսկ պարսաւել յաճախ խնդրոյն առիթ տը-
ւող աղբար կողմը:

Մարդկութիւնը պիտի ահաբեկէր այ-
սօր, եթէ հաշուի առնուր ժողովուրդներուն
գիւրահաւան բնաստորութիւններէն յառաջ
եկած զոհերը:

Ճշմարիտ է թէ՛ մեր Գահիրէի միակ
վարժարանը, իր փլվիված, խաղաղ վի-
ճակովն հանդերձ, մեր սրտին ամենէն մօտ
գտնուող հաստատութիւնն է, ինչպէս որ՝ մեր
սրտին սիրելի հաստատութիւնն մտաւորական
ու բարոյական զարգացման նպատակին հա-
մար կանգնուած է այն, բարի հազար տէր
բարերարի մը կողմէն: Այսպիսի վրայ
յղացուած օգտակար նպատակներուն գերա-
գոյնը՝ մարդուն դաստիարակման նպատակն
է: Ամէն անհատ դաստիարակուելու և ի
կարգին դաստիարակութեան վսեմ գործին
մղում տալու պարտական է: Մենք, հայերս
մասնաւոր շատ պէտք ունինք դաստիար-
ակութեան:

Հոս, ազատ միջավայրի մը մէջ, ուր
Բորենիի երախ մը նախանձու հայացքով չի
կապտեր մեր շարժումները, եւ անդեմար
զիրար հրահրելու, ուժերիս հաւաքելու և
քաջալեր կարողաւ ենք գործին պաշտպան
գտնուող երիտասարդներու: Թիւրքիւն-
ներ նշմարել ու միշտ պարտաւականներ յօ-
րինելը որպիսի ստղ, այնպիսի հեշտ է Մեծու-
թիւնը պակասութիւնները գիտակցութեան
վեճ հոգեով մը ուղղելուն և մեր երիտասարդ-
գործիչներուն փորձառութիւն սովորեցնելուն
մէջ կը կայանայ: Յաղոկոտ չ'ըլլանք մեր
այս համառօտ կեանքին մէջ: Խոհուն, լուրջ
ու հեռատես ըլլալուն ատենը ճիշտ հիմայ է:

Ուրեմն մի՛ գեղեւիւր գուք, հայ գոր-
ծիչներ, թէ և խուլ ձայնի հասնին մերթ
ձեր ակնհայտներուն. եւ անպ, աւիւն ու կո-
րով ունեցէք, դաստիարակութեան վեճ
նպատակին իրականացման համար սատարե-
լու, և ի հարկին՝ կուռելու... Ժամա-
նակն եկած է որ մեր գաղթականութեանց

վայրերը կրթութեան ու զարգացման կեդ-
րոններ ըլլան: Ընդվայր վատնելու չենք
այս թանկ ժամերն ու առիթը՝ որ կրնան
տարբեր գիտութեան մը խուսափել մեր
ձեռքերէն: Յորդ յորդ թափուած կարծիք
արեան յարգը գիտնանք մեր օտարութեան
մէջ: Ուժ, կամք ու բարոյական գեռ չեն
պակսիր հայերուս: Վերածնութեան նոր
բարազլուս մը սխալու ատենը հասած է.
ուրեմն հերիք մտածել գուհիկորէն, և
չքաջնել, չքաջանել մեր ուժերը անձա-
կան ու փառասիրական նկատմաներով: Հա-
ւատացէ՛ք, սիրելի ընթերցողներ, թէ այս
օրինակ ձկտամներու վախճանը սարսափելի
անկում մ'է, ըստ որում այս կարգի վար-
մունքներէ յառաջ եկած մտաւորական դաւ-
նութիւնները օր մը սարսափելի ցարդախ-
րայիլն յեղափոխութեան մը ծնունդ պիտի
տան՝ որպէս աշխարհային անարկու բա-
նակներն և աւերող, քանդող հրեանները
չպիտի կրնան դիմակակել: Մենք ազնե-
րուն մէջ մասամբ չեզոք ժողովուրդ մը
ըլլալով՝ աւելի ներհուն կերպով խորհրդա-
ծելու ենք այս կէտերուն վրայ: Գահիրու
տակ հեծող ժողովուրդներուն խուլ մը-
րնչիւնները կրնան մեզ զգուշացնել շատ մը
ապագայ ներքին աղէտներէ եթէ այժմէն
հեռատես ըլլալ գիտնանք:

Ոչ նուազ հեռատեսութեան ու շրջա-
հայեցութեան կը կարօտի նաև այս ինչպիսի,
որ Հայ ժողովուրդին ներկայացնելու առի-
թը կ'ունենանք հիմա: Գալտեան վար-
ժարանին դռները քանի մը աւուր համար
ևս փակուեցան ըսինք ըսչ մը առաջ: Այս
տեսակ անտեղութեան մը հանդիսարդները
պիտի չ'ըլլայինք այսօր, եթէ կոյ՛ նուր
մտնները՝ շատ դժուարութեամբ կարգա-
դրուած գործ մը քարոզանք ընելու գի-
տումով, գիւրդգայ մտքերուն վրայ պղզ-
պեղ ցանկելու անհարկի գիւրդութիւնը չ'ու-
նենային:

Եւ սակայն՝ կը կարծէք որ Հոգաբար-
ձութիւն, Ուսուցչական մարմին ու ժողո-
վուրդին բանիմաց գաղտ տեղի տան Օրիոր-
դի մը չափազանց ոտնձգութիւններուն...
Ես երբեք չեմ կրնար հաւատալ, թէ այս...
բարոյական այլասերումը այս աստիճան թու-
լամարթութեան իսկ կրնայ մատնել ազգ-
մը, որ արդարև արգահատելի վիճակ մ'է:

Այս տեսակ ազգային խնդիրներու մէջ
ժողովուրդին առաջին գործը պէտք է ըլլայ
մօտէն ուսումնասիրել խնդիրը, և ամենէն
մեծ ձայնը ունենալ ազգային կենսական
հարցերու մասին: Բայց, ամէն բանէ առաջ,
ժողովուրդ մը գիւրդագրիւ ըլլալու չէ ա-
սանկ պարագաներու մէջ: պարագանու-
թեամբ՝ զննելու է խնդրոյն յարակից մա-
սերը: ազգային Սահմանադրութեան օրինօք
ընտրուած և քաղաքական ժողով, « Թաղ-
Թորհուրդ, Հոգաբարձու անուն տակ գոր-
ծող մարմիններուն յաղոգութեանց ձեռքն-
տու ըլլալու է: Ժողովուրդային իմաստուն
գիւրդագրութիւնը ասանկ կը պահանջէ:
Մեր գործին մարմինները ազատ խոզելու
ենք իրենց իրաւաստութեան սահմանին մէջ,
որ արթուն, պաշտօնասէր ու քաջ ըլլան
ապագային: Մարդ արտաքին ազդեցու-
թիւններու ներքեւ ակամայ յերկուս խոզ-
ճի մը ձայնին անսալու անը՛ թանկարժեք
թիւնն ու դատողութիւնը ընկեր ունենու:

է իրեն, եթէ ճշմարտութեան ու տրամաբանութեան հակառակ զրոյցներու առջև խազարէր ըլլալ չուզէր:

Արդ, ներկայ խնդիրը համառոտ՝ այլ ճշգրտորէն պատմելով ժողովուրդին աշխարհային ու ազգային գործոց գերազանց գատաւորին լուրջ գատաւորութեան ու վրձնոյն կը յանձնենք կանխաւ:

Ներկայ Հոգաբարձութիւնը, հակառակ Օր. Սօֆի Մանիսալեանի անաստղ բնաւորութեան, ունեցած թերութիւններուն, և մանաւանդ՝ յաճախ դպրոցին Տնօրինութեան ու ուսուցչական մարմնոյն դէմ ունեցած անտեղի վարմունքներուն, կը գրէ Օրիորդին, որ դարձեալ իր պաշտօնն ստանձնելու հաճութիւնն ունենայ 650 զըշ. ամսականով փոխանակ 600,5, ինչպէս կը վճարուէր առաջ պայտօնային:

Օրիորդը կը յուզուի, կը տաքնայ և կը գրէ վերջապէս թէ՛ — Ես պաշտօնէս ձեռնադրեցի միայն նպատակ չունիմ բնաւ, և սակայն, ձեր առաջարկած 650 զըշ. ուր չէ՛ որ պաշտօնավարել պիտի սկսիմ —

Հոգաբարձութիւնը դաստիարակ-Օրիորդին այս անձա՛հ պատասխանին դէմ փոխանակ յուզուելու, կրկին կը գրէ՝ որ առաջարկուած կերպով պաշտօնը կամ յանձն առնու և կամ՝ իրեն ըով գտնուած գոյքերը յանձնէ առ որ անկ է, ինչու որ, հակառակ պարագային, ուրիշ մը կանչել հարկ պիտի ըլլայ:

Օրիորդը՝ ծանօթ կրպակի մը մէջ, հոգաբարձութեան մը իրաւասութիւններն առանց ի նկատի ունենալու, փրփրած՝ կը դարձնէ իրեն զրկուած պայտօնային նամակը, և անպատշաճ խօսքերով կը ճամբէ սուրիչ առթիւ մը նամակատար անձը:

Անա՛ այս է վարձարանին փակ մնալուն միակ պատճառը:

Հիմայ, այսքան անկողնակալ ոգւով հրատարակելէ վերջ, մեզ կը մնայ գիտնալ թէ ինչ իրաւամբ Օր. Մանիսալեան 650 զըշ. ուր չուզէր պաշտօնավարել: Ինչորոյն գանձող կտորն է այս:

Անցեալ տարեշրջանին վերջերը, մ'ով գիտէ որմէն դարձուած Օր. Սօֆի կը ներկայանայ մեր ամենուն յարգելի եղող անձնաւորութեան, Ասեմ. Տնօրին փաշայի, այս տեսակ պարագաներու մէջ, կանանց յատուկ եղող արտասուքի ցուրտ կաթիլները արտաւանդութեամբ ծայր չարած:

Ասեմախալ փաշան, դպրոցին մէջ անցած դարձածէն բոլորովին անտեղեակ, և զգածուելով Օրիորդին թափած արցունքներէն, կը խօսի առթիւ մը Սրբազան Առաջնորդին որ Օրիորդին արգանքն իր վրէժակը նկատողութեան առնելու բարեհաճութիւնն ունենայ: Սրբազանը Տէր Սրբապետն քահանային կը պարզէ խնդիրը:

Տէր Հայրը սերտած ըլլալով Օրիորդին բնաւորութիւնը, և անոր կարողութեան աւ մասուցած ծառայութեան փոխարէն 600 զըշ. ամսականին վրայ 150 զըշ. տարակարծ յաւելում մը ընելը անարգար նկատելով՝ իբր լիազօր Տնօրէն, ալ յուրքէն կը մերժէ: Եւ ինչպէս չ'մերժեր, երբ խոստումներով պահուած ուրիշ ուսուցչական ստուար խումբ մը ունէր աչքին առջև: Տ. Սրբապետն տեղի կուտայ վերջապէս Ս. Առաջնորդին պահանջները, և Հոգաբարձութիւնն ալ ճարահատ, իբր նուէր կը վճարէ 150 զըշ. յաւելումը մինչև ց'նոր տնօրինութիւն:

Հիմայ՝ Հոգաբարձութիւնը Տ. Սրբապետնի ծանօթ խնդրոյն հետ ուրիշ շատ մը կնճառտ խնդիրներ ալ լուծելու ժամանակըն երկած տեսնելով, դարձել սկսած է, ժամանակակից, հակառակ իր բողոքներուն, երբ անձուկ պիտո՞ւնէր մը (Երեւակայեցէք: Ես ամիսը 55 ոսկի, Գահիրէի պէս համալսարանական քաղաքի մը ստուարութիւն Հայ գաղութին վարձարանին համար: Պոլսոյ ամենէն վարձող թաղային դպրոցին պիտո՞ւնէն ալ աւելի սեղմ է այս): Ահապէս վարձարան մը կուտալորէն հարկին ներքե կը գտնուի:

Տ. Սրբապետն խնդրէն վերջ կնճառտ խնդիրներուն աստիճանին առաջին բազրո-

տին վրայ կը գտնուէր Օր. Մանիսալեանի այս տմարանի յաւելում խնդիրը:

Սակայն ինչու՞ այսքան պահանջկոտ կ'ըլլայ Օր. Սօֆի, երբ դպրոցին պիտո՞ւնէն և գեռ ուրիշ շատ մը իրեր ու իրողութիւններ, անցեալ տարու միջազգային օյնքան ժպտուն տեսքը մը չեն յորիներ իր ասպարէզին առջև: Ինչ, կը կարծէ թէ ինք, նուազ ծախքերու կարօտ Օրիորդ մը, Սէթեանի պէս բազմադամ ընտանիքի տէր ուսուցիչ-տնօրէնէ մը աւելի՞ կ'արժէ: Եր այսքան յաւանկոտ կ'ըլլայ մեր ունեցած արժանիքէն աւելի դնահատման արժանացած ատենին: Երբ համեմատութեան դրուի Տ. Սէթեանի տրուած 700 զըշ. Օրիորդին պահանջած 750 զըշ. ինչու, և կըռուի այս երկու ըրեցները, ինչպէ՞ս հայտնեցնու է ուղիղ արամաբանութեան հետ արժանիքներու այս հակոստումը վարձարանութեանց սպորտիստները: Եւ երբ Հոգաբարձութիւնը սահմանադրապէս իրեն յորհուած իրաւասութիւններուն ամբողջն կ'առնու՞մ կըսուի կերպով գործելու կը վախձայ Օրիորդին անարգար պահանջներուն դէմ, և դպրոցը փակել կ'ստիպուի, ինչպէ՞ս գոհացում պիտի տայ Օր. Սօֆի յարուցած այս իրաւունքներէն արգար բողոքին, որ տարիներէ ի վեր սին խոստումներով կը սընանի եւեթ, և որոց յախտեանկան ըլլալուն ալ տարակոյս չուսինք:

Ո՞րքե պաշտպանի հովեր առնելով՝ կը պնդեն թէ՛

— Օրիորդը որք է, Ղլպային՝ է հարկ է զայն պաշտպանել: Այս տեսակ մտածողները յաւէտ մեր արգահատանքը կը շարժեն, որովհետեւ նայ գիտնալ հարկ է որ դպրոցը՝ ո՛չ որքանոց է և ո՛չ ալ անկելանոց, և որքի կամ Ղլպաբար մը համար՝ Սէթեանի նման դաստիարակուած Տնօրէն-ուսուցիչ մը, փորձառութեամբ գառնութիւններուն ազդեանքներու ճերմկցած գլուխ մը գոհել բացարձակապէս տխարութիւն պիտի ըլլայ: Հապա Հոգաբարձութիւնը, Սէթեանի համարող և անկեղծ սիրով մը անոր յարող Ուսուցչական մարմինն ու մեր աղիկներուն պագարին... Իժգարգութեան ծանր աւնորը վերջ ի վեր թափառող Հայ ժողովուրդը, իր անհոն տառապանքներուն մէջ ինկծուած, բնաւնպատակ չունի Ղլպաբար մայրեր պատրաստելու. քանի որ բնականօրէն հասուն բարի կամ չար բնաւորութիւնները կ'ազդեն մատաղ կազմութիւններուն վրայ:

Աստուածն ու Ազգը սիրողը, մեր մը տաւորական ու բարոյական իրական զարգացման իրապէս փափաքող անձը՝ թո՛ղ դպրոցի ժողովուրդին մաքուր սիրտն ու հոգին կազմի կենցաղ մը չ'լեցնող խնդրոյ մը համար, պլոտրելէ: Վարձարանական պարզ խնդրոյ մը համար նորանոր միջազգային յարաբերութիւնները կ'ազդեն իրարմէն իրարմէն կ'ազդակերպուին թեան քայքայմուն և յառաջիմեական ծաւալուն ոգւոյն խափանման պիտի ծառայեն:

ՍԵՒԿ

1901 Սեպտ. 9, Գահիրէ

ՊՅՈՑԳՍ

(Նամանուրեքաբէ Այեթէն ալ Միւսէյի) «La Vision»-ի

Իբրոջական մըն էի դեռ շա՛հ փոքրիկ, Երբ գիշեր մը սենեակիս մէջ առջնիկ՝ Գրաստիկս առջև լռուիկ ու մեղիկ նստած դասերս կը սերտի առանձին... Խեղճ տղի մը իմիկն էիր կը քսէր՝ Սեւեր հագած՝ եղբոր պէս ինձ կը նմանէր:

Սեպտեմբերի քայքայ սիրուն էր ա՛ն զիմով, Ի՛րիկն անցի՛ր՝ գոր կարգալի նրսածկոս, Ու ձախար ձեռքիս վրայ իմ ձեռքով՝ Լուռ մունջ մընայ միջին ծագեց առաւօս... Խոնքն էր միջ, դեմքիս վրայ սիրունիկ ժրպիտ մը մեր կը նշարուէր անուշիկ:

Անտարկտիկ մէջ կ'երթայի միջո ման գալ՝ Երբ նոր եղբայ ևս ծանրեցիկ զարկան, Ընկողնակալ, հո՛ն, քրտիկ վրայ՝ որ մըն ալ

Ծանրեւ սակ տեսայ ինձ դիմ յանդիման Գրաստիկս մը՝ որ հո՛ն էիր քսէր՝ Սեւեր հագած՝ եղբոր պէս ինձ կը նմանէր:

Մեկ ձեռք վիկ, փնջիկ մը միւս ձեռքիս մէջ՝ Այն ինձ ուղիղ ուղիղ սրտ կարգիկ... Ընդ, — «ձեռքերս մէջ, ո՛ն, շախաչ կեղեց...» — Ու յա՛նկարձ կես մը դառնալով իր աչքի՛ն՝ Բոլոր մը սիրուն, հո՛ն, բարձրացած ֆիջ հեռին, Ինձ ցոյց տաւ սուր ծայրիկով իր մատիկ:

Օր մ'ալ դեռ նոր վառուած սիրով Հայրենացի՛ հոններու հետ սենեակիս մէջ առանձին, Ազգիս զիտար վիճակի վրայ միջապո՛ւ Դռն արցունքներ այտերս ի վար վագիկ, Տեսայ նման մ'որ մեկ անկիւնն էր ֆայտեր Սեւեր հագած՝ եղբոր պէս ինձ կը նմանէր:

Մըսնի՛ր գր, մըսնի՛ր դիմով իմ սրտիկն, Երկիկ միջո ա՛ն ցոյց կուտար մեկ ձեռքով... Իսկ միւս ձեռք վրայս դրած իր կարծիքն՝ Հասնալուած էր կարծես իմ զարեւով... Բայց, հաստաց մը միայն քեզի հետ դուրս... Երազ մըն էր կարծես... յա՛նկարձ ցեղեցաւ:

Հասակ մը կայ, մարդու կ'ըլլայ ետևընդոս... Խնայի մէջ, որ մը, բաժակ ի ձեռքիս, Գրաստիկս ալ յառաջիկ ինձ, փոքր, սեղոյ, վերջին մըսը կը ֆառիկ բաժակիկ, Կոչնական մը դիմիկն էիր քսէր՝ Սեւեր հագած՝ եղբոր պէս ինձ կը նմանէր:

Վերադարձիկ սակ զնայիկն կը ցեղեց, Միս ծիւ եղած նորք թեմեղներ բանկալիկ, Չախիկ նստած էր կապեր չոր դիմիկներ, Վրջիկ քեզի կ'ուզէր դրջիկ իմ ձեռքիս... Ու իմ բաժակ զարեւելով իրեկնի՛ն՝ Չախիկս իրեկնիկն մեջ մայր վայրիկնիկ:

Տարի մ'անցաւ... իմ սրտիկն իմ սրտիկն էր, Սեւեր էի դեռ անկողնի մը սեւերի մօտ, Ու՛ր հայրս նոր իր վերջին շունչն էր քսէր... Գիտուն վրայ կը պղպար յայտնալուստ: Որք մը տեսայ որ հո՛ն էիր քսէր՝ Սեւեր հագած՝ եղբոր պէս ինձ կը նմանէր:

Գիտուն վրայ դրած էր ա՛ն իմը պրակ, Այ չե՛ր փայլեր յայտնալուստի արեւուն... Միթէ վրայ անթիկն էր ա՛ն իմը արեւուն՝ Ո՛ր իր վիճիկ գեղեցիկ ձգած, իմ ձեռքիս վրայ: Մեռնական արևարիկ մօտ ինձի հետ կոծ կը բառնար՝ զիս դիմելով անդիմ:

Չանցայ թէ՛ ո՛վ էր անձնակն այն զիտար... Ա՛ն իմ ողորմ կեանքիս անկն վայրիկնիկն Արտալուստ տեսիկն էր ա՛ն՝ որ միջո լուսկուզար իմ դիմիկն կը կանգնէր անկնիկն... Ո՛վ ալ ըլլար անիկն՝ հրեշտակ կամ դէմ, Հո՛ն, հո՛ն, աչքի՛ր, ա՛ն... Այն էր իմ վերջ:

Միթէր որի՛ — ա՛յ ժամանակն հասած էր — Իմ երկուս դուրս եղաւ աշխարհ մը հեռու, նոր ոչ զնէր էր կալ... Ետեկի կարեւոր: Ան անվրէնս բախտ մ'իմ շինել յուսուսու... Կըրոս նստով անիկն ստի իմ ֆայր, Ու՛ր որ գացի, իմ Ոգիս ալ իմ հետս էր:

Ու՛ր որ գացի յայնչա՛նք երկնից սակ, Միթէ ու այ՛րես յոգեկոցիկ իմ սրտիկն... Այնիս արցունքն ո՛չ չափ ունէր, ո՛չ ֆանակ... Ու կալ Չանկոցիկ իմ ցոյցիկ վրայ կրքնած կը ֆայր զիս անհարար իմ կենդանի, Ա՛ն իմ ինչ չ'ունէր... Ե՛ր շարագներ անթիկն...

Ու՛ր որ գացի, ևս անդուկայ ծառայով... Մարտն էր պ'ն, ծայրակ Հայրցոց աշխարհի... Երբայտուած երազներու ստեղծներով՝ Ու՛ր որ գացի՛ անոր կարտն զգացի...

Դոցի, տեսայ՝... տեսայ՝ սիրտով զարարուն... Կեանքը Հայրեն տեսայ՝ յարաւոր, երեւուն... Ու զժրպիտ մը դիմելու կ'ըլլէր, կը կանգնէր՝ Սեւեր հագած՝ եղբոր պէս ինձ կը նմանէր:

...Ա՛ն, ո՛վ էր դեռ, որ անբաժան իմ կեանքս՝ Ու՛ր որ երթաւ, ձախարս վրայ իմ հետս էր... Չե՛ր կարծեր որ դեռ իմ բախտս կա անդրո՞վ... Ժրպիտներու մէջ նշարուիս դուրս ա՛յ ո՛վ, Արցունքները՝ գոր կը քսիս գոր ունիկն... Ու երբ ֆեզ ինձ միջո կը տեսնէր անկնիկն՝ Նայախախտող Հայիկն Չայիկն իմ սիրտս կ'ըլլէր թէ՛ Դռն իմ ցաւերու ընկեր էր...

Եւ ո՛վ էր Դռն՝ որ օրոցիկն միջո ցայտար Ընկեր եղար... քայքայ չի կրցար ինձ օգնել... Մանկութեան միջին եղբայրս պէտք... Դռն անտուրիկ էր չի կրցի ֆեզ կրջել... Ըսէ՛, եղբայրս, ըսէ՛, ո՛ն իմ սակներ զիս... Սեւեր հագած՝ եղբոր պէս ինձ կը նմանիս...

— Ո՛չ չար հրեշտակ մ'է՛ն ևս, ո՛չ ալ մարդկային ձախարակի էր կալ Ոգի մ'անկնիկն: Ո՛չ Աստուած մ'է՛ն, ո՛չ ալ ոգի մը անգութ...

եղբայր յոյ եւ ևս ու կարեկից ցաւերուց: Ճիշտ իմ անունս ըսիր... Ես ֆու եղբայր յոյ եւ, Ու՛ր որ երթաւ ֆու հետք եւ, ֆեզ կը սիրէր. մ'որքան արթիւ, միջին իրենս գերեզման... Երբ վիշտերու մէջ կը ներդիս՝ ի՛նձ դիմէ, Եղբայր յոյ եւ ևս, սերտ ցաւեր կ'անտիկ... Բայց չե՛ս կարող ձեռք ձեռքիս մէջ դնել... ՀԱՅ ՈՂԻՒՆ Ե՛՛՛՛ զիս չե՛ս կարող շօշափել... ՀԱՅՈՂԻՒՆ

ՔԵԿՈՅՑԻ ՄԸ ՎԵՐՋԻՆ ՊՍՏԱՍԻԱՆԸ

Աղէքանդրէյ օրն ու ժամը կորուսած Եսբաթ-օրն «Փին իկ» ի ինքզինքին միայն հաւնող — իր մասին ուրիշներուն հարցնելու չէ՛ հա... — Եսբաթից, իր 4 Սեպտ. 15րդ. թըւուն մէջ անխառն ու խեղճ ու կրակ քանի մը սող կը ցափառէ. Յճ ասիական տառերով վերնապէս մը գետեղելով այդ քանի մը տողերուն վերայ...

«Փին իկ» ի Պ. Եսբաթի գեղարդին վերայ գետեղուած տառերու աստիճանները կը հետեւեցնենք թէ՛ խեղճին գլուխին բարեկարգ մտածելու, զիս զատանցիկ տալու աստիճանին հասած ըլլալու չէ: Այդ կըցտոր ու անխառն գրաստանները բերնէ մը գուրս թափելու համար գոնէ այդ հիւանդ գլուխին տաքութեանը 40 տառերու անցած ըլլալու էր: Բայց ինչպէս ամեն կանոն իր բացառութիւններն ունի, այնպէս ալ հիւանդութեան այս սեղանը իր ճիւղաբերակ բացառութիւններն ունենալու է:

Ուստի կը կարծեն թէ «Փին իկ» ի խմբագրերը, իր պաշտպանել ջանացած գրատիպ անխառն ըլլալու, և հետագայում իր գրաստանները անխառնութիւն ըլլալու կոտորով, Հայաստանի օճախներուն անխառն բազմող ինքնանկնիկ և տեսութիւնը կորուսած նիւնեկներուն պէս անձքի սկսած է: ո՞ւրքե ալ ասոր հակառակ կը պնդեն թողուցը որ այդ թեր ու գէ՛մ կարծիքները ինքնապէս իրենց եղբայրութիւնը գրատիպն էր: Բայց որովհետեւ կ'ընայ պատանել որ քանի մը օրէն «Փին իկ» ի Պարոն խմբագրին գրատիպ գերաստանն աստիճանները կ'անցնէր, ևս իր գրաստանները իրականութեան մէջ եղած նկատուելի կրնայ պարծիլ, ուստի միւս պարծիլ ուղիղորտ Պարոնին սպագային խեղճ գրութեան գրատիպ վերակեր ի նկատի ունենալով, հարկ է որ շեղակ ուղին գծենք իրեն համար:

Տեսնենք ինչպէ՛ր կ'ըլլէ այդ ուղիղութիւնը: «Փին իկ» ի պահած լուսններէն (չենք գիտեր թէ «Փին իկ» ի խօսելու ատեն ինչ պիտի ըլլէ յիշատակ: Աղէքանդրէյ Պատարածութեան լուսններէն — Առժ. Թաղ. Խորհուրդին նորընծայ պատմաբանութիւնը, իր սիրտը խմբագրին () բերնով կ'աշխատի ժամանակէ մը ի վեր «Փին իկ» կը նշանակէ Գրաստանութեան մը, կամ անձնաւորութեան մը Օրվանը:

Այս քանի մը տողերէն, որոնք ինչպէս ըրինք, գրաստանը ըլլալու մեղքն ինչ անցնի, երբ բառերու վրայ պիտի պարծիլ օր մը, մեր խեղճորտս կատարողը. նախ Պատ. Թաղ. Խորհուրդին Առժ. հանգամանք տալ, Պ. Կոչնականին հաճելի ըլլալու համար: Ո՛վ գիտէ ո՛րք չափ ֆեջ ըլլաւ Պ. Կոչնական. բայց այդ վերջին նախան ու վարձարիկ ու բարութիւնը իրեն և իրեններուն խնայելու չափ ալ անգով պէտք չէ ըլլալ:

Երկրորդ Տնօրնու անունը «Արշալոյս» ի խմբագրերը, ի նկատի ունենալով, — բայց այդ խեղճ սերիքի գլուխը արեւոք նկատողութիւն կրնայ ընել — անոր երեկնիկ ուսուցչական պաշտօններուն՝ Եկեղեցւոյ Կարգապետի պատշաճ ալ միացուցած ըլլալու:

Խմբագրի մը, Երուսաղէմի ժամանակաւոր քաղաքի սեւ գլխարկով, սեւ միւսկոնով, սեւ հոգի ու սեւ ծրար... աստիճաններն ըլլալու է, ինչպէս է Եսբաթ-Օրվան «Փին իկ» ինքնագրով ու տխուր Պարոնը, որ ինկալից բարձրադեմ էր... Ժամանակի պահանջներուն համակերպելով ստանձնուած պարտաւատութեան մը բերումով, աստիճանը բառով նայալու ըլլալ կարծէ իրմէ արժանաւոր Խմբագրի մը:

Իբաւ է, կրնայինք յուսուի ևս պէտք էր որ յուսայինք, այդ պարտութիւնը ինքնապէս տըպարանին վիճած գրաւոր պարտութիւն է մը, կամ մասինս աստիճանը համար վարձարանի մը մէջ ուսուցչութեան փափուկ պատշաճ խնայուած հարց է մը. կամ շատ շատ՝ երբ դար առաջ սարող Աստուծոյ սրբապետութեան անցած երկուսանից մը, ուրեմն ինչո՞ւ չ'ուսուցնէր իր գրաստանը հիւանդէ մը:

Ուրեմն, Պարոն, եթէ ձեր պիտու ցնորիկ պատշաճից գաղթին և ձեր արդէն տկար ուղիղ պաշտող սպարութեան քանի մը օրէն անցնի և ուշաբերիք, խնդրեմ հիտուելով աստիճանը կարգաւոր օգտուելու համար գոնէ:

— Ո՛չ չար հրեշտակ մ'է՛ն ևս, ո՛չ ալ մարդկային ձախարակի էր կալ Ոգի մ'անկնիկն: Ո՛չ Աստուած մ'է՛ն, ո՛չ ալ ոգի մը անգութ...

« Ստորագրելու երեք տարիներէ ի վեր Հիմնադիր-Տնօրէն և Խմբագիր «Արշալոյս» թերթի, 1890-91 թ. Գրեմ-Գրութի գեղարուեստական, կարեւոր գործով զբաղած լինելով հանդերձ, Պօլիսէն անպատճառ հեռանալու ստիպուած լինելով, Գրեմ-Գրութի հասած և ստանձնած եւ Գրագրքի Խորհրդանախագահ — այժմ Գրութեան — վարարանին մէջ ուսուցչական պաշտօն, միացնելով անոր Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Կարգապետի պաշտօնն ալ » :

« 1881-82-էն սկսեալ, մասնած եւ Հայ Եկեղեցւոյ անկախ երգեցողութեանց վրայ և ամեն օր իմ հանդիսով ժամերէս խնայելով, ձեռնարկը ընդօրինակած եւ Հայ Եկեղեցւոյ բոլոր երգեցողութիւնները, անբողջ ձայնագրեալ, և այլ և այլ տեղերու մէջ երգուած տարբեր կազմակերպութիւնները, էջմիածնականը, Պօլսականը — իւրաքանչիւր թաղերու մէջ երգուածները զատ զատ — Սաղիթականը, Ձայնագրած եւ գաւառներու մէջ երգուած եղանակներու ամենամեծ մասը, պահելով անոնց խնայողական գամանքը, Այս կարեւոր աշխատութիւնները ըրած եւ, Պօլսոյ մէջ եկեղեցական երգեցողութիւնները կանոնաւոր և միօրինակ ձեւի մը վերածելու համար, կազմութիւնը առաջարկուած Դպրատն ժողովին իբր անպարտաւոր ներկայացրելու և անոնց աշխատութիւնը գերբացնելու համար, բայց հանգամանքներ անպատճառ լինելով՝ այդ գաղափարը իրագործուած չէ՝ իսկ այժմով, քանի որ ուրախութեամբ կը կարգանք Անանիոսի մէջ թէ՛ կոմիտաս վարդապետ պիտի գրադի այդ գործով, կրնանք այդ աշխատութիւնները անոր զբիւլի, իբր նոր սկսելու ձեռնակին օգնելու համար :

« Սոցալ սակցելու թէ՛ Պօլս եղած ատենս, այս հոյակապ աշխատութիւնները գնահատուած են Պօլսոյ շատ եւ կարեւոր գեղարուեստական փողովին և Կառուկական Խորհուրդին, Տր. Թիւրքաթեանի Աստուածաբանութեան օրով :

« Աստուծոյ գոտ, գաւառներու մէջ շատ մը տարիներ ուսուցչական պաշտօններ վարելէ զատ, ութ տարիներ շարունակ պաշտօնավարած եւ սեղուտ Գրութեան վարարանին մէջ, և պարբարար իրարու յաջորդող ժողովոց և Հողաբարձութեանց կատարեալ գործունակութեան արժանացած » :

« Միայն մէկ ամգամ ընդհատուած է վարարանի պաշտօնս, այն ալ գիտես ինչ ատիկու՝ Սաղիթան Ժողովարանի արտաքին անժամանակ... սարկաւազ խմբագիր... » որ բարձր մակարդ անել մտացած չէս, ու անոր, բարձրագոյն, կրակարանին մէջ միացող խոնկի պնդանքներէն, որ կ'ըլլարտայ օրին մէջ, խելայեղած ու զգլլած կը գաւառացիս, լսէ՛ ուրեմն, թէ՛ կ'ըր ընդհատուած է այդ ուխտաւոր օգտակար պաշտօնավարութիւնս :

« Երբ ս. Վոսն. Եւուոսթի պէյ Աղիզ, 1897-98 թուականին հոգաբարձու նշանակուեցաւ Քարտանի վարժարանի, և այն ատեններն էր որ զաղթականութեան հոտանքը իբր քայլերը Երկրպետ ուղղած էր, և Վոսնութեան ատենը շատ մը ինքնատիւ հիւրեր կային, որոնց պակասիլը կը փակաբէր, և որովհետեւ նա իբր հողաբարձութեան պաշտօնը հայ մանկուոցն իրական օգտին գործածելու եղանակը չ'էր գիտեր, և ատիկայ իբր փոյթը ընելու գործը պատճառ մ'ալ չ'ունէր, ուստի իբր հիւրերէն մէկ քանին պարտ վարժարանին մէջ գիտեցի իբր ձեռնասպասութեանս : այն ատեն հարկ եղաւ ինձ թողուլ վարժարանը՝ զո՞ն չ'երթալու համար լարուած անարգ կերպիներուն » :

« Իսկ զո՛ւ, Գամելիոն խմբագիր, զուչէ՛ր որ իմ ունեցած վեհանձն ընթացքս գովասանք բառերով զու լրացուցի համակրանքը կը յայտնէի և ձեռքս կը սեղմէի » :

« Եթէ այն ատեն Սաղիթական սեւ Գրագրի տակ խնամով ձածկած չը լինէիք սեւ սիւրտը և ժողովարանի բարձրագոյն... հաստացի՛ր որ (քաղաքավարութիւնը մէկ դի) չէ՛ թէ ձեռքս, այլ և ուղեւոր անգամ չէի տար, որ զու սեղմէի » :

« Ետտ հեռացալ խնդրէն, ուսուցչական պաշտօնի վրայ կը խօսէի, մասնաւոր այն ատենուան, որ իմ պաշտօնավարութեանս ատենին հետ կապ ունէր վերագրանանք ուրեմն այդ չ'ըջանին մէջ մտնելու » :

« Տիար Կարապետ Նաւասարդեանի և ստորագրելուս ուսուցչական օրովն էր միայն, սր Կարապետի վարժարանը իբր այնչափ տարիներու գոյութեան ի վեր, ըստ ծրագրի իբր չ'ըջանաւարտները ունեցածէ՛, որոցմէ միոյն վրայ կը պարձնայ իբր անցեալ օրեր « Փին իկ » յիջ մէջ, որպէս թէ՛ զու հիմնած և միեւնոյն ատեն վարելու անկարողութեանը քայքայուած վարժարանի շրջանաւարտ լինելը : Բնականաբար այդ յատարարութիւնը ընելէ առաջ հանդիպած չէիք « Արեւելեան Մամուլ » 1894 թ. թիւերուն, ուր նկատեալ ծանուցած էր վարժարանի շրջանաւարտը ներկայացուցած իբր արդէն չ'ըջան մը աւարտած լինելը... » :

« Բայց ինչ որ է պարոն, և թէ՛ ինչպէս ըսի, ինչպէս գրուեց զայ, լաւ կ'ընէ՛ « Փին իկ » յի անդոյն խմբագիր, Սմբատ Բերեթոս մը, և անոր կողմէ Տրեքտու Խմբագիր անուանուած «Արշալոյս» յի Տնօրէնին տարբերութիւնը հետեւեալներն, որոնք շատ համառօտուած ու շատ մ'ալ յայտարարուած են... » :

« Փին իկ » ի խմբագրել միշտ մտաբացկան մը եղած է, ամեն առիթ շահագործել գիտցած է և քամած ժողովուրդին քաղեր, ինչպէս ազդու կը պիտի քամէր մարդու մը արեւը » :

« Անուշի նմանութեամբ մը — թուրք կառավարութեան շահագործող կապաւորութեան և սոցիալութեան արդեամբ — Բերեթոյ (հալէպ) քանտար մասն է ժամանակ մը, ամենց ո՛ր և է որոշ գործունէութիւն մը ցոյց տուած լինելու, աղքատային օգտի տեսակետով, ու հարկ կ'այ մի առ մի թուել թէ քանի՛ քանի՛ հարկերնեղով ու կիներ շորթած է, ասոնց վրաները կ'երգանի են և արեւադարձաբար հոս կը գտնուին, Ձե՛ս հաստատութիւն և թէ՛ քանի՛ն գուրու գտնուած ըլլալիբ, նիւթապէս շատ նուազ պիտի օգտուէիք, քան ինչ որ բնատարբութեանը պատճառաբանելով կ'ըստի օգտուէիք... » :

« Երկրպետ հասար, անդոյն պարոն, իրապէս գործողներէ կազմուած խումբերու հետ խառնուած, որպէսզի անոնցմէ տարբեր աչքով չ'նայուի քիչ, Աղքատներու ըրած շահատանկութիւնները ալ ուսից միջոցի տօղբակիւն մէջ գնելով Գահիրէ կ'ար, ձախ ուսից ստորակն ալ լեցնելու համար... » :

« Կեդրոնական Կրթարան մը հիմնեցիր, կամ այնպէս ըսել թէ հիմնեցիր : Բայց մտացա՛ր անոր մէջ դարձաները : Մոացա՛ր որ այն հիմնարկութեան նախնական ծախքերը եղող 50 ուսկիները շարաւար գործածելով, քաջաբայցի վարժարանն ալ՝ և միջոցիբ անոր համար աղքատները քաղէն լայն դուռերն ալ, որ ըսել է անօտարտ անցաւ, ու այդ ամենէն վերջ ինչպէս մեկնեցար Գահիրէէն... այն ալ նորէն պատմելու հարկ կ'այ, ամեն ոք գիտէ արդէն և ևս ի վերջ մէկ բառով բացատրեցի, արդ՛ ո՛ր է, պարոն, զու արժանիքը, լսէ՛ : Ի՛նչ քանի մէջ կը կայանայ, հիմակ ալ « Փին-իկ » մը ունի որ մէկ քանի անգամային քիչ համախոն ըլլալու տարիպատաներու շնորհիւ կ'ապրի, և ո՛չ թէ « Արշալոյս » յի նման իբր գտած ընդունելութեամբը, Ըսե՛ն է Փին իկ օղակ մ'է... » :

« Իսկ գալով « Արշալոյս » ի խմբագրին, ի վերեւ պատմեցի արդէն թէ՛ ինչպէս և ի՛նչ պարագաներու տակ Գահիրէ հասած է, ի՛նչպէս արդէն Պօլս եղած ժամանակ իբնէն ազաւարկուած ուսուցչական պաշտօն մը ստանալու է, և ո՛րչափ արժանաւորապէս միացուցած է այդ պաշտօնին և՛ դպրագոյնի պաշտօնը » :

« Բայց, Պարոն, կարծեմ թէ՛ ոչ ոք պիտի մեղադրէ զիս, ժամանակի պահանջմանց համակերպելով պատուաւոր կերպով Դպրագրի և ուսուցչի պաշտօն վարելու և իմ աշխատութեամբս — որչափ ալ չարաչար ըլլայ այն — իմիններս ասկեցնելու, քան թէ՛ այն միջոցը՝ որ զու ընտրած ես, խմբագրելը « Փին իկ » յի, գործելու կարող ըլլալով հանդերձ՝ անամթաբար մուրալ... » :

« Հիմակ կրնաս, Պարոն, տիրացու բուռին մէջ զու գործունակութիւնը փնտռել, և այդ արժանիքը ունեցած լինելուս համար կը պարձնեմ, ի մեծ նախատինս այդ բառը սելիալ իմաստով գործածողներուն : Ամեն տիրացու՛ հին ամիրաներու չկողմնին կրակ չի դնէր, սր Ա. Արիւրեան մ'ալ տիրացու բառը նեղիմակի, իսկ անդէն Սուրբն Պարթեւեան մ'ալ իբր « Վաղուան Ձայնին » մէջ այդ բառի հեղինակին կոթող մը կ'անգնեցնել առաջարկէ » :

« Հիմակ բացատրուեցաւ թէ՛ ո՛րչափ անզօր բուռով մը ամենամեծ ազդեցութեամբ նախատել կ'երթան մէկը, որ երեսուցէմէն սակաւաւ չի սեւ կնկարովը, բարձրագոյն և ձեռնի զուր պոթկացած չէ անկէ, ինչպէս է՝ « Փին իկ » յի խմբագիրը... » :

« Արդ՛ հարցում մը՝ ո՛ր լաւ է Պ. խմբագիր () ի պահանջել հարկին եկեղեցի մը վարել, ուր հայ ժողովուրդը միահամուռ կ'ազօթի, և տիրացու կ'ազուի, այն ալ չիզմէ, թէ՛ մուրալ և ինքզինքը գովել, որոց երկուքին ալ շատ վարժուած և ատակ կը տեսնեմ զքեզ » :

« Աւելի տրամաբանական կայ, եթէ քանի մը տարի դպրագոյնութեան պաշտօնը վարելուս համար այդ պաշտօնը տիրացու բառին թանձրացեալ իմաստով կ'ըսուի, ինչո՛ւ ուրեմն չ'խոսեմք իմաստով թէ՛ « ըստ իմաստով անկէ թէ՛ ո՛ր և է արժէքէ գօրծի կը նկատեմ » երկու տարիէ ի վեր « Արշալոյս » յի անընդհատ կը վարեմ, ինչ որ զու խեղճ « Փին իկ » յի կ'ըսէր ընել : Այս ատիկ ևս գերազանցաբար և անօղակի կերպով իրաւունք կայ, որ մեր ընթերցողները քեզմէ տիրացու յարկերուածը շատ աւելի ձեռնարկ և կարող ընդգրկեն, ու կ'ընդունին արդէն, քան զատարկ տակառի մը զընդելու ժամանակ հանած արժուկներուն պէս ինքզինքը գովող « Փին իկ » յի անարժանը » :

ՓՈՂՈՎՈՐՊԱՅԻՆՈՒԹԻՒՆԸ. — Չստանցանքներու մէջ կ'ուսուցնու թէ՛ « Ժամանակն է յայտարարելու թէ՛ իբր երեւոյն թուականն մինչև ցարդ, « Փին իկ » յի բողոքովն անկախ () է, « Արշալոյս » յի պէս ծախուած կամ կ'արեւած չ'ըլլալով, Մեր նպատակն եղած է, և և պիտի ըլլայ պաշտօնակն ժողովուրդին իրաւունքը (օճօ... ժողովուրդին իրաւունքը զանազան չը գիտցողը ինչպէս կ'ընայ պաշտօնակն զայն : Մ. Խ.) Միացնել ազգային հաստատուած օրէնքները, գիտակազմը ընել ժողովուրդին միասնութիւնը շահագործողները, ըլլալ անիկ, ըլլալ տո՛նիկ :

Ո՞ր ժողովուրդին աչքին քու « իրաւունք պաշտօնակն » և նման բառերով իբր փնտռու զող Պարոն, պէտք է գիտնալ թէ՛ ժողովուրդը զքեզ լաւ մը փորձած, հակացած է, ու քու կեղծ խօսքերէդ ալ չ'պիտի խարտի, միայն ինչպէս ըսի, Աղքատներու մէջ մէկ երկու — վստահ երկր որ այն ալ ընթացիկ հոտանքին հետեւելով սկսեալ կը խաբուին — խաբուողներ կան, բայց անոնք ժողովուրդ չեն ներկայացնել :

Պ. Խմբագիր () ժողովուրդին իրաւունք վերայ խօսելու ժամանակ կը մոռնայ Գահիրէ եղած ատենը զու ժողովուրդական շարքի մը մէջ կատարել ուզած տիրացու զերբողը՝ կը մոռնայ որ ստորագրութիւնը ուրանալու չափ ցածութիւն գործեցիր, զորն ատեմ կամ զորն հարպարակեմ, զի անթիւ են մեղք քո Պ. « Փին իկ » յի խմբագիր... » :

Ուրեմն այս ամենը տեսնելով ու գիտնալով կը կարծես որ ժողովուրդը խաբուել ալ ևս քու խօսքերէդ, Բայց զարմանալի բան մը կայ, ինչպէս այդ բաները զատանցանքներու մէջ նոյն իսկ իրենց տեղը ունեցած են :

Գալով ժողովուրդական անուանած արդի խնդրող, որուն շուրջ վերջուկ մը ձգել կ'ուզես, որովհետեւ քու ներքին նիւթական հաշիւներն ալ ինչպէս կը թելադրեն, դարձեալ կը սրբալին : « Արշալոյս » քու կարծած իմ կամ հաստացնել ուզած իբր պէս ո՛չ ծախեալ է և ոչ կ'արեւալ — ինչպէս զուս ևս զլինելու ատեմէն — այլ իբր ներքին զուս կ'արեւալ զատողութեան համաձայն կը գործէ, կը պաշտպանէ այս պտուռ Սասնաւորութեան տրամադրութիւնները և զուս ժողովուրդական խնդրի մը : այն է՝ ժողովուրդին տրամաբանութեամբ սասնաւորապէս ընտրուած Թաղ. Խորհուրդը մը, որ խմբակի մը կողմէ, որոց մասին զատ գուրտով մը պիտի խօսինք, նախատուի յանրաւել, այս նախատինքը ժողովուրդինը չէ՛ :

Երբ այս է իրաց կ'արեւութիւնը, մեր պաշտպանած Սասնաւորութեան տրամադրութիւնները և անոր պարունակած օրինակներն տրամադրութիւնները չ'են ըլլալ : Արշալոյս ինչ ընէ, կըր օրէնքն չ'հակացող և հակահալու ալ անտրամադիր գիտնալ իրենց զորած խմբագրին հետ, չեն ուզեր իբր բարի խրատներուն հետեւիլ և անտեղի արժուկներ յարուցանել կուզեն ազգային Ասայնորդարանի շուրջ, ժողովուրդին շահերը իրենց հետ ընելու ունենալով : Այժմ անդոյն խմբագիր, կամ լաւ է ըսել իրապէս արժանաւոր խմբագիրներու աղաք, բուն քեզի յարմար անունը այս թերթին առաջին երեսին մէջ փնտռել, երբ ինչքոյ գուրտը գայ — այս քանի մը տողերը բաւական են զերբ ըսելուներու և սանձելու համար, եթէ բաւական չ'ըլլան, քիչ ասեմք քեզի համետ մ'ալ պիտի յանձնարարենք, չ'ըլլայ որ անոր ալ վաղանձի է բուռով նախատել ուզեն, որովհետեւ աշխարհի վրայ ամեն արեւատ իր մասնաւոր տեղը ունի, եթէ մեզի զարմացողը բուն մը կայ, այն ալ քու ինքզինքը խմբագիր ընողը ընել է :

Հետեւեալը միանգամ ընդ միշտ կը յայտարարեմ թէ՛ ո՛չ թէ Աղքատներու Ասայնորդարանն է փնտրեալ օճալը, որ զատանցանքի վերջին նախատել ուզեն, որովհետեւ աշխարհի վրայ ամեն արեւատ իր մասնաւոր տեղը ունի, եթէ մեզի զարմացողը բուն մը կայ, այն ալ քու ինքզինքը խմբագիր ընողը ընել է :

Կը յուսամ թէ չ'երբ զքեզ թող տալն վերջ, եթէ ստուգել թող տան, այս սողերը կարգաւոր շատ պիտի օգտուին :

Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՄԱՐԿ ԻՐԸ. — Գ. Պօլսէն հետեւեալ լուր հազարուած է Բեթօր լրագրին : Սէլամըքի արարողութեան միջոցին մարդ մը զօրքերու շղթան ձեռքեղով Սուլթանի կառքին մօտեցաւ կը փորձէ աղերասագիր մը մատուցանելու համար : Սուլթանին թիկնապահ զօրավար Բազուպ բայա երեք անգամ կ'աւքէն հետու կը մղէ անախորժ խեղդալուր, բայց յամառ մարդը կը յաջողի կատրին մտնելու և աղերասագիրը մատուցանել :

Անկարելի է նկարագրել Սուլթանին յուզումը որ կ'ենթադրէր թէ սպանուած թեան փորձ մը պիտի կատարուէր իր վրայ : Երբ կառքը Համիդիէն մղելի ընէ բալը կը մտնէ, ուր ամեն վտանգ վերջացած կարելի էր նկատել, Սուլթանը սաստկապէս կը յանդիմանէ Եագուպ բայան իր թոյլ ընթացքին համար :

Եագուպ կը պատասխանէ կարմիր Սուլթանին :

« Զեր Վեհափառութիւնը կրնայ հրամայել որ զիս հրացանի բռնեն, բայց ի՞նչ արտաճի չ'ունի զիս նախասէլու » :

Սուլթանը որ իր շուրջը գտնուողներէն ասանկ պատասխաններ լսելու վարժուած չ'է՛ կը հրամայէ որ Եագուպ բայան ստիպահանաղորդ ընեն և Կարին արտրեն :

Միևնոյն ժամանակ Սուլթանը չափազանց վախկոտ է և չ'ուզեր « Գժգոհ » ներուս հետ աւրել, ուստի կէս ժամ յետոյ արտրի հրամանը ետ կ'առնէ և իր աստիճաններուն մէջ կը վերահաստատէ Եագուպ բայան : Բայց քաղաքի թուրք զօրավարը կը յայտարարէ թէ Եագուպը աւելի նախամեծար կը սեպէ քան թէ՛ ստորնութիւնն ու անպատուութիւնը :

Եագուպ բայա ամուսնացած է հանգուցեալ Խոյիմալի բայայի աղվական ձեւ միէ իշխանուհիին հետ :

Արտապիղոյ, միթիարական բան մը կայ Եագուպ բայայի այս խրոխտ և ճշմարտապէս զինուորական ընթացքին մէջ : Անոնք որ Տաճկաստանն ու Սուլթանը մօտէն կը ճանչնան, անոնք միայն կրնան լիովին ըմբռնել ու գնահատել Եագուպի համարձակաօտութեան ամբողջ բարոյական արժէքը և նըշանակութիւնը :

Եագուպ բայայի պէս մարդիկ այնքան հազուադիւր են Տաճկաստանի մէջ որ իրաւամբ կ'արժանանան մեր համակրութեան և ակնածանքին :

Ահաւասիկ « Տիւրք » մը որ հաշար երիտասարդ թիւրք » է աւելի նախամեծար է :

Գահիրէի Հայոց Որբատիրաց Ընկերութեան Ընդհանուր Ժողովոյ գումարը հետեւեալ նամակը կ'ուղէ ընկերութեան անգամայն :

Մեծպագային Տիար

Ընկերութեան Ընդհանուր Ժողովոյ Գ. Նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի 15 սեպտեմբեր 1901, կէս օրէն յետոյ ժամը 3 ին կարան — Նիթեցատան սրահին մէջ ի Գանթարա էլ — կէտիտ :

Օրակարգ ունենալով

- 1. — Երկամսյ տեղեկագիր ու հայուսկը շուրջ ընթերցումն :
- 2. — Ընտրութեան ընդհանուր ժողովոյ Դիւանի :
- 3. — Ընտրութեան Գործ. Ժողովոյ :

Կը խնդրենք որ բարեհաճիք ընկերութարար ներկայ գտնուել սոյն նիստի և կատարել հէյ որդիներու պաշտպանութեան գործին մէջ իբր ընկեր ձեր ստանձնած պարտականութիւնը :

Միւսմը յարգանքօր Որբատիրաց Ընկ. Ընդհ. Ժողովոյ Ատենադպիր Ս. ՕՏԱՊԱՆԵԱՆ Մ. ՊԱՎԻՃԵԱՆ Գահիրէ 9 Սեպտ. 1901

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ե Ր

Պիւլսոյ 6 Սեպտեմբեր. — Անճաւոր անձ մը ցուցանակներու մէջ երկու հրացանի հարուստները քաշած է Միացեալ-Նանսկայ Նախագահ Մաթթիլիյի վրայ և զիսրաւորած է զայն նախաճար կերպով : Մարտապալեք մեղաւորացած է

Պիւլսոյ 7 սեպտեմբեր. — Նախագահ Մաթթիլիյի ռաւազործը Գոզլոյս կը կոչուի, և Բոչոնիսցի անիշխանական մէջ Բոչոնիսցի անիշխանական համարական հեռագրիները քաշած են, որովհետև մարտիկներ կ'որոշեն Նախագահին անմիջական ապախիմանք հարուստ :

Փարիզ 9 Սեպտ. 4, Պոլսէն Թաւիլի քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ երգորումի Հայոց և Օսմ. գործը միջոց բարձրում մը սեղի ունեցած է քաշմարտի մտնելու մը վրաարտապետ կան :

ՄԹԱՌ ԼԱՅՓ

Հիմնադրված է 1843 թ. 11 ամիսի 18-ին

Հիմնադրված է 1843 թ.

Բացարձակ ապահովություն. — Չափա-
ւոր ապահովագրի. — Ապահովագրի հնու-
թեան համաձայն շահու առաւելություն. —
Իրականաց պահանջները ապահովագրի վը-
ճարմանց յայտարարութիւն պահանջ. — Չափող
պարագաներու մէջ անմիջական հաշուեյար-
դարութիւն. — Եւրոպայի բաժանում մասն Հինի
ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս. ԼԵՕՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ եգիպտոսի

ԱՄԵՆԷՆ ԿԱՐԵՒՆՈՐԸ

(Մեզի հասար)

«Արշալոյս» ի Ա. և Բ. թիւերը ստա-
ցող նոր բաժանորդներէն և ամեն անոնց-
մէ, որոնք իրենց բաժանորդները պիտի
նորոգեն, կը խնդրուի որ հաճին իրենց
բաժանորդները հասցնել իրենց ընտրած
միջոցով կամ Մաննա-բուրով, ուղղելով
հետեւեալ հասցէին .

E. TOROSSIAN

Direct. Propr. du Journal Armenien

« ARCHALOUYCE » LE CAIRE

ԿՈՇԿԱԿԱՐ

Գ. ԵՒ Յ. ՊԵՏՐՐԵԱՆ ԵՂԱՐԻՔ

Պագար-Մուրար ք/ն 39

Կ'ուղէ՞ք ունենալ հմուտ վարպետի
ձեռքէ ելած, ֆրանսական նորաձեւութեանց
համապատասխանող, ոտքերը կոշտերու ցա-
ւերէն ազատ պահող և դիմացկուն կոշիկ-
ներ :

Իրմեցէ՛ք ի Պաղար-Մուրար թիւ 39
խանութիւն մէջ հաստատուած Պէշիբեան կշ-
բարց, որոնց գործածած ապրանքներու
տողունութիւնն և ձևերու մասին ունեցած
հոգածութիւնը ամեն տարակարգ վեր է :
Պէշիբեան եղբարք իրենց յաճախորդաց ը-
րած յանձնարարութիւնները փութով և
մեծ խնամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ դիմել ի-
րենց . ապահովագրէ մնայուն յաճախորդ
պիտի լինիք :

ԳԻՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Ամերիկացի մեր ազգայնոց կը ծանուց-
ուի թէ՛ Երրորդ տարեկանի սկիզբէն «Արշա-
լոյս» ի Գործակալութիւնը ստանձնած են ի Շի-
գակո, Մ. Մ. Գորակալութեան և ընկ. որոնք
բացի «Արշալոյս» էն ,

Բաժանորդագրութիւն կ'ընդունին

Նաեւ հետեւեալներէն :

ԱՆԱՀԻՏ, ազգային, գրական և գեղար-
ուեստական ամսաթիւեր. տարեկան բաժանոր-
դագրի տուար 2 :

ԳՈՒԹԱՆ, հանգէս հողագործական և ճար-
տարարութեան, որ կը հրատարակուի փարի-
զի մէջ ամիսը մէկ անգամ : Տարեկանն է 8 չճ.
ճանապարհածախով միասին :

ԱՐԱՐԱՏ մեր միակ շին կրօնական մասա-
գիրք՝ որ կը հրատարակուի Ս. Ելիթիանի : Տա-
րեկանն է մէկ տուար միայն :

Նամակագրութիւն կ'ընդունին, կըր պայու-
րանքը 50 սենթ և պակաս է . իսկ աւելին հա-
մար պէտք է դրամ զրկել Money orderով և
կամ registeret նամակով, Յանձնարարութիւնն
ըր կանխիկ կը կատարուին :

Տեղեկութիւններու համար գիմել
M. M. KARAGAVOORIAN et Co.

61 West Huron St.

CHICAGO III

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՆԴՈՎ

«ՕՓԷԼ ՀԱՅԻ ՏՈՒՏՈՒ»

Շասր-կը Պարիսի փողոց

ԱՂԷՔՍԱՆԻՐԻՍ

Գահիրէն և Եգիպտոսի բոլոր ար-
ուարձաններէն օգտփութեան և մեկ-
նուի պատճառաւ Աղէքսանդրիա եկողնե-
րուն կը ծանուցանենք թէ՛ առանց վարա-
նելու կրնան դիմել մեր պանդոկը, որ մաք-
րութեան, ապահովութեան և օգուէտու-
թեան տեսակէտով և մանաւանդ ծովայն-
եաց դիրքով միակն է Աղէքսանդրիայ մէջ :

Օգտփութեան համար ընտանեօք Ա-
ղէքսանդրիա եկողներն, ամսական վարձ-
քով և դիւրամատչելի գնով պիտի կրնան
հանդատուէն և ծովայնաց սենեակներ
և ի հարկին արարքըն մը արամագրելի
ունենալ :

Աղէքսանդրիայ Հայկական պանդոկը
գալ փափարովներն երկփութեղով կայարան
հասնելու առնն, պէտք է ուշադրութիւն
ընեն մեր թարգմաններուն կուրծքին վրայ
գտնուած «Պանդոկ Հաճի Տուտուի» յատ-
կանանին :

ՄԱՐԻ ՊՈՂՈՍԵԱՆ

ԳԱՌԼՈ Մ - ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐՔ

ՕՓԷԼ ՍՈՆՖԵՐԱԹՈ ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ հասարակութեան թէ վերջերս հաստատուած ըլլա-
լով հրատարակի, կ'ընդունինք և կ'ստանձնենք ամեն տեսակ և ամեն ազգի ապրանայ յանձ-
նարարութիւնը, ինչպէս մամագրոյցի, գոհարեղենաց, արեւելեան և եւրոպական զանազան տե-
սակ գուճաւոր և ճերմակ քարերու, Գոյովիական Փոփոխութեան, ինչպէս նաեւ գրուած և
անգիր խոզովակներու — գովան — (մեծաքանակ) . եւրոպական նրբաշիւս կողովակներու և հո-
տեղենաց և այլն :

Մասնաւորապէս համաձայնած լինելով Պոլսոյ Անտէլիպ (Մարտիրոս Պէլլէբեան) ասան հետ,
որուն ապրանքները մեծ գնահատման արժանացած են նոյն իսկ եւրոպական հրատարակաց վը-
րայ, միշտ ի միջեր ունինք յիշեալ հանրածանօթ տան ամեն տեսակ ապրանքները . ինչպէս Re-
producteur Andelib (Փոփոխութիւն ասեղ) որ անմրցելի է հրատարակելի վրայ, և Գոյովիական
Փոփոխութեան ներկայացուցիչ Մ. Պոսաէօնի սքանչելի անարկական եղանակները :

Մեր արամագրութեան տակ ունինք Անտէլիպ գործարանին զանազան նուագներն . ինչ-
պէս Մանչոյի, Գաննի, Ուր և այլն . և Փոփոխութիւն համար տաճկական եղանակներու վրայ շափ-
ուած հին և նոր վարպետ երգողներու ընտիր Փովաններ :

Կ'ստանձնենք կատարել Մաքսային ամեն տեսակ գործողութիւնք փութով և չափաւոր
փոխարեւութեամբ :

Կը գանձենք զանազան երկրներու փոխանակ գրքեր :

Բաց աստի ընկերութիւնս Լոնտոնի, Պոլսոյ, Գահիրէի, Նափայի և Երուսաղէմի մէջ թըր-
թակիցներ ունենալով, կ'ստանձնէ այդ անգիրուն համար ամեն տեսակ ներածում և արտածում :

Մեր հասցէն է CARLO M. BASMADJIAN et Cie. Okelle Monferrato

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԵՆԵՐ

Պալատի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշդ դիմաց,
Գաֆէ Տը Լա Պուրսի կից :

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ԳԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՅՄԱՍՆԱՃԻՂՆԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն շաւաղոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են և ասոնցմէ մինչև ցարդ
17,000,000 ծախուած է :

400 հ աւելի վիսյակներով և մեքայներով վարձարուած, Նրաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ


ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանաչիսին մէջ ստացած է .

ՀԱՌԳԱՅԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ ՀԱՅՔԱՅԻՉ ԱՆԳՐՈՅ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ
ԱՐԿՈՒՆԵՐԻՆ ԵՒ ԹՕԴԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԿՈՒՆԵՍ

ՀԱՅՔԱՅԻՉ Ե. Բ. ԽՏԻՎԱՆԱՆ ՏԱՆ

Կեղծութիւն զգուշանալ,
ուշադրութիւն դարձնել իւ-
րաքանչիւր մեքենայի վրայ
ՍԻՆԿԷՐ ի յստիակնից :



Չրի դասեր և նորոգու-
թիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենա-
յից համար, յաճախորդաց
տուններուն մէջ :

Վճարմանց Գիւրութիւն

Փոխանակութիւնն ունենալից
եւ նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

ԳԻՆ ՉՄՓԱՒՈՐ

ՏՅՆԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՓ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՆԻՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԿ ԴՐԱՄԱԳՈՒՆ 1 ՄԻԼԵՍՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժ-
նէ ամենէն աւելի շահաբաժինները :
Ապահովագրեալներուն արդէն
վճարած է կամ ի նպաստ իրենց գու-
մարած է 3 ՄԻԼԵՍՐ 480 ՄԻԼԻՈՆ
որ գրեթէ այնպէս ռըրի սրկ է ըն-
կերութեան մէկ միլիարդ աւելի է :

ԳԼՈՐԳ ԵԿԱՒՕՑ ներկա-
յացուցիչ ի Դահլիճ

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր
գործակալատար յԱղէքսանդրիա :

ԳԱՐՈՒՑԻ ԸՆՏԻՐ ԱՄՈՒԹ

Ունեինք մինչև ցարդ հայ մը որ գիտնայր
մտածել թէ՛ անուխն ալ մեծաքանակ սպասու-
մ կ'ունենայ և կրնայ կարեւոր շահ արտադրել :
Առեւտուրի այդ սպասարկչն ալ օտարնե-
րուն թողուած էր :

Տիրար Յակոբ Վարդանեան (Սանտուանի
քեռորդի) այժմ ամենաքանակ արտադրի վաճա-
րականութեամբ կ'ըլլար և մրցում բացած է
օտարներուն դէմ :

Դիմեցէ՛ք ի միջերանցը Սուգ-Սուտար
թիւ 17 և 18 :

Անխարդարի կշիռ և չափաւոր գին :

Ա.Զ.Գ.

Գանի մը պատուաւոր տուններու մէջ
խոհարարութիւն և երբեմն սպասուորու-
թիւն ըրած և իր պարկեշտութիւնը վկայ-
ուած մէկը անգործ լինելով, կուզէ տունի
մը մէջ դարձեալ խոհարարութեան կամ
սպասուորութեան գործ մը ունենալ գի-
րամատչելի գնով :

Դիմել թերթիս Խմբագրատունը :

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԹՈՐՈՍԵԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԱՐՇԱԼՈՅՄԻ

ՇԱՐԱ ԱՊՏԻՒԼ-ԱՅԻՉԻ ՍԿԻՐԸ

Օսմանիյէ Դեղարաւիկն դիմացի փողոցի մէջ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅՅՄ 1900

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ կը պատրաստուին Հայերէն
եւ Եւրոպական լեզուներով ամեն տեսակ հրատարակութիւններ, մասնաւոր
խնամով :

Գիրքեր, Կանոնագիրներ, տեղեկագիրներ, շրջաբերականներ, Հրատար-
գրեր, Տոմարներ, Այցիքներ, Մանուկներ և այլ և այլ վստահականական
յանձնարարութիւններ կ'ընդունուին յափառ գներով :

Յանձնարարութիւնի եղանակ պահանջ պէտք է համաձայնուած գներն կետը
կանխիկ վճարել և մ'ստացելու արտադրութեան անմիջապէս վերջ :

Տպարանը բաց է ամեն օր առաւօտուն ժամը 7 եւ 12 և կես օրէ վերջ
2 եւ 7 ր :